

## 2. ՄԱԿԱՐ ԵՊԻՍ. ԲԱՐԽՈՒՏԻՑՅԵՐԵԱՆՑ:

Փետրուարի 6-ին, էջմիածնում վախճանուեց Մակար եպս. Բարխուտարեանցը: Հանգուցեալը Արցախի Խնածախ գիւղացի էր, նա իւր ուսուսն առբլ էր Շուշում և երիտասարդ հասակում գնացել էր երուսաղէմ, ուր աշակերտելով հանդ. Մելքիսեդեկ արքեպիս. Մուրատեանցին՝ ձեռնադրուեցաւ վարդապետ, որից յետոյ վերադառնալով հայրենիք երկար ժամանակ քարոզչի պաշտօնով շրջում էր հայրենիք գիւղերում: Նա սիաժամանակ պարապում էր և գրականութեամբ. դրած ունի մի շարք կրօնական և պատմական երկեր, վերջիններս որպէս արդիւնք իւր բազմամեայ ուղերութեան Ախանիքում, Արցախում և առհասարակ Աղուանից աշխարհում: Սոցանից գլխաւորներն են «Աղուանից երկիր և գրացիք», «պատմութիւն Աղուանից» երկու հատոր, որի երկրորդ հատորը դեռ մամուլի տակ, է, «Քաղաքնիք Ղարաբաղի» և այլն: Ունի և մի բանի գրուածներ Ղարաբաղի բարբառով, օր. «Արազը տարին կտարի» և այլն:

Մակար եպիսկոպոսը վարեց և եկեղեցական բազմաթիւ պաշտօններ, ինչպէս սինօդի անդամութեան, առաջնորդութեան և այլն:

## ՀԱՅ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Շուշի. Ա. Գեանջեցեան.—Զեր «Նոր կեանքի շէմքին» դրամանստացանք: Զեզ նամակ կգրենք այդ մասին:

Կարս. Բ. Թորոյեան.—Կարլ Կառլցիու «Ֆրիդրիխ էնգէլսի յիշատակին» երկի թարգմանութիւնը ստացանք:

Փարիզ. Հայ Աշխատ. միութեան վարչութեան.—Զեր կոչք տպում ենք, իսկ ձրի «Լումալիս» անկարող ենք ուղարկել և վերջապէս որ մէկին ուղարկենք ձրի. ամեն մի վճարող բաժանորդին մի օրինակի էլ ձրի պատուէր ենք ստանում. այդ մասին կարող է միայն հասարակութիւնը մտածել և ոչ մի խմբագրութիւն, որ ամենայն տնտեսութեամբ հաղիւ կարողանում է ծայրը ծայրին հասցնել:

Թիֆլիս. Արիս. Ցովի.—Ստացանք Արտուր Էջստի «Նինօ Վարիպանիձէ» պատմուածքի թարգմանութիւնը:

Ն. Նախ.—Տ. Շոռլուեանց.—Ստացանք ձեր բանաստեղծութիւնը:

Ալէքսանդրապոլ. ♀. Մոճուեանց.—Անցեալ տարի խմբագրութեանս ներկայացրած Ձեր աշխատութիւնը «Մամիկոնեան առիւծը» սկսեցինք շարել և տպել այս Նե-ի համար, երբ մեզ լուր տուիին, որ նոյնը տպուելու է «Ճարագիր» այս շաբաթուայ համարում, որին նոյնպէս ուղարկած էք եղել, առանց մեզանից յետ ստանալու բնագիրը և կամ յայտնելու, որ մենք այլ ևս չտպագրենք: Ձեր այդ վարձունքը բաւականաչափ դրամական վնաս պատճառելուց զատ խմբագրութեանս՝ դեռ ուշացրեց այս համարի հրատարակութիւնը, որովհետև ստիպուած եղանք կատարելապէս փոփոխել համարը և երկու մամուլ նորից շարելու տպել:

«Լումայի» խմբագրութիւնը պարտք է համարում իւր սրտագին շնորհակալութիւնը յայտնել այն ամենին, որոնք հաճել էին շնորհաւորել Լումայի տասնամեկլը:

«Շուշի. Նիկ. Վ. Տէր-Աւետիքեան. Վերջին ըրպէին ստացանք Ձեր յօդուածը: Կկարդանք և կպատասխանենք:

Թիֆլիս. Ա. Վարդին. — «Մշակի» այն համարը, որի մէջ թերթիս խմբագրի «գրագէտների միութեան» նախագահ լինելու մասին նկատողաւթիւն է եղել տպուած, խմբագրութիւնը բարւոք չէ համարել մեզ ուղարկել: Մենք այլ ևս ոչ մի պատասխանի չենք արժանացնի նոցա, մինչև որ մեր պահանջած՝ հասարակական դրամների և գոյքերի հաշիւները չեն տայ այդ պարոնները: Ոչ մի «մանեօվը» չի աղատի նոցա այդ պատասխանատուութիւնից: